

Քաղցկեղի գենետիկական խորհրդատվություն՝ Ինչ է պետք իմանալ

Քաղցկեղի գենետիկական խորհրդատվությունը նախատեսված է այն մարդկանց համար, ում մոտ առկա է քաղցկեղի առաջացման մեծ հավանականություն՝ քաղցկեղի իրենց անձնական կամ ընտանեկան պատմության հետևանքով: Գենետիկական խորհրդատուները առողջապահական ծառայությունների մատակարարներ են, ովքեր կարող են օգնել գնահատել՝ արդյոք Ձեզ մոտ առկա է քաղցկեղի առաջացման բարձր ռիսկ՝ ուսումնասիրելով Ձեր անձնական և ընտանեկան բժշկական պատմությունը: Գենետիկական խորհրդատվություն ստանալը Ձեր ընտրությունն է: Ստորև տեղեկությունը կօգնի Ձեզ որոշել, թե արդյոք այն ճիշտ է Ձեր դեպքում:

Որո՞նք են այն որոշ պատճառները, որոնց հիման վրա կարող եմ դիմել քաղցկեղի գենետիկական խորհրդատուին:

Դուք կարող եք դիմել քաղցկեղի գենետիկական խորհրդատուին, հետ, եթե առկա է ժառանգական ռիսկի մասին վկայող քաղցկեղի անձնական և/կամ ընտանեկան պատմություն: Ընտանիքում քաղցկեղի ժառանգական ռիսկի առկայության մասին հուշող ազդակներից են.

- Սովորականից ավելի վաղ տարիքում (50 տարեկանից ցածր ախտորոշված) ախտորոշված քաղցկեղներ
- Հազվագյուտ քաղցկեղներ, ինչպես օրինակ՝ տղամարդկանց կրծքագեղձի քաղցկեղ Ախտորոշում մեկից ավելի տեսակի քաղցկեղի համար
- Միևնույն կամ հարակից տեսակների քաղցկեղ ունեցող ընտանիքի մի քանի անդամներ
- Ժառանգական քաղցկեղի համախտանիշի անձնական կամ ընտանեկան պատմություն, ինչպես օրինակ՝ Լինչի համախտանիշը կամ կրծքագեղձի և ձվարանների քաղցկեղի ժառանգական համախտանիշը

Այս ցանկում ընդգրկված չեն քաղցկեղի գենետիկական խորհրդատուին դիմելու բոլոր պատճառները: Եթե վստահ չեք գենետիկական խորհրդատուին դիմելու հարցում, խորհրդակցե՛ք Ձեր բժշկի հետ. միգուցե նա օգնի հասկանալ՝ արդյոք իսկապես անհրաժեշտ է Ձեզ համար:

Ի՞նչ է տեղի ունենում գենետիկական խորհրդատվության ժամադրության ընթացքում:

Դուք կհանդիպեք գենետիկական խորհրդատուի և երբեմն նաև մեկ այլ բուժաշխատողի հետ, օրինակ՝ բժշկի հետ: Այդ հանդիպման ընթացքում կքննարկեք Ձեր անձնական և ընտանեկան բժշկական պատմությունը: Գենետիկական խորհրդատու կներկայացնի գենետիկական հետազոտությունը և դիտարկի օգուտները և ռիսկերը՝ օգնելու որոշել, թե արդյոք գենետիկական հետազոտությունը անհրաժեշտ է Ձեզ: Գենետիկական խորհրդատու կգնահատի՝ արդյոք Ձեզ մոտ առկա է քաղցկեղի առաջացման ռիսկի բարձր մակարդակի, և կքննարկի քաղցկեղի կանխարգելման Ձեր տարբերակները:

Ի՞նչ տեղեկություն կարող եմ ստանալ գենետիկական հետազոտությունից:

Քաղցկեղի գենետիկական հետազոտության նպատակն է տեսնել, թե արդյոք որևէ մեկի մոտ առկա է ժառանգական գենետիկ փոփոխություն, որի արդյունքում որոշ քաղցկեղների դեպքում նրանք գտնվում են ավելի բարձր ռիսկային գոտում: Եթե որևէ մեկի մոտ առկա է քաղցկեղի առաջացման ժառանգական ռիսկ, հաճախ լինում են մեթոդներ, որոնց միջոցով բուժաշխատողը կօգնի նվազեցնել քաղցկեղի հավանականությունը կամ վաղ հայտնաբերել այն: Երբ անձի մոտ առկա է քաղցկեղի ժառանգական ռիսկ, նշանակում է՝ տվյալ անձի ընտանիքի անդամների մոտ նույնպես կարող է ռիսկի հավանականություն լինել: Խորհուրդ է տրվում այս տեղեկությունը փոխանցել ընտանիքի անդամներին, սակայն Ձեր ընտրությունն է: Գենետիկական խորհրդատու կօգնի կարող է օգնել Ձեզ հարազատների հետ խոսելու հարցում, եթե ցանկանաք:

Ինչպիսի՞ նմուշ է կիրառվում գենետիկական հետազոտության համար:

Եթե որոշեք անցնել գենետիկական հետազոտություն, սովորաբար հետազոտությունը կատարվում է արյան, թքի կամ այտի լորձաթաղանթի նմուշի միջոցով: Հազվագյուտ դեպքերում Ձեր մատակարարը կարող է այլ տեսակի նմուշ պահանջել:




Ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ իմ արդյունքները իմ բժշկական խնամքի վրա:



Եթե Ձեզ մոտ առկա է քաղցկեղի ժառանգական ռիսկ, Ձեր բժիշկը կառաջարկի անցնել քաղցկեղի սկրինինգ վաղ տարիքում՝ կատարելով ավելի ընդլայնված կամ հաճախակի սկրինինգ, կամ կառաջարկի վիրահատություն՝ քաղցկեղի ռիսկը նվազեցնելու համար: Եթե Ձեզ մոտ չի նկատվում քաղցկեղի ժառանգական ռիսկ, հիմնականում կանցնեք քաղցկեղի տիպիկ սկրինինգ: Այն անձիք, ում մոտ արդեն առկա է քաղցկեղ, գենետիկական հետազոտությունը կօգնի բուժման ուղղորդման հարցում: Դուք կարող եք նաև տեղեկանալ քաղցկեղի այլ տեսակների համար Ձեր ռիսկի և այդ ռիսկերը նվազեցնելու տարբերակների մասին:

Կարո՞ղ են արդյոք ապահովագրական ընկերությունները կամ գործատուները օգտագործել իմ գենետիկական հետազոտության արդյունքները՝ ապահովագրական իմ ծածկույթը մերժելու համար:

Գոյություն ունի Գենետիկական տվյալների հիման վրա խտրականության արգելքի վերաբերյալ օրենք (Genetic Information Nondiscrimination Act, GINA) կոչվող դաշնային օրենք, որով մարդիկ պաշտպանված են խտրականությունից՝ հիմնվելով նրանց գենետիկական տվյալների վրա առողջության ապահովագրության և աշխատանքի մեջ: Այս օրենքը չի տարածվում որոշ գործատուների վրա, ինչպես օրինակ՝ ԱՄՆ զինված ուժերի և 15-ից պակաս աշխատող ունեցող ընկերությունների վրա: GINA-ն չի պաշտպանում խտրականությունից երկարաժամկետ խնամքի, հաշմանդամության կամ կյանքի ապահովագրական ընկերությունների դեպքում: Ինչը նշանակում է, որ ապահովագրական այս ընկերություններին թույլատրվում է հարցնել Ձեր գենետիկական խնդիրների մասին, և նրանք կարող են օգտագործել այս տվյալները ապահովագրության հատուցման և հավելավճարների վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:



Արդյո՞ք իմ բժիշկը պետք է ուղեգրի ինձ այդ խորհրդատվությանը:

Կախված հանգամանքներից: Գենետիկական կլինիկան կամ Ձեր ապահովագրությունը կարող է Ձեզնից խնդրել տրամադրել բժշկի կողմից ուղեգիր: Հնարավոր է՝ կարողանաք հանդիպել գենետիկական խորհրդատուին առանց ուղեգրի: Խորհրդակցե՛ք Ձեր բժշկի հետ, եթե կարծում եք՝ գենետիկական խորհրդատվությունը կարող է օգուտ տալ Ձեզ:

Իմ ապահովագրությունը կհատուցի՞ գենետիկական խորհրդատվության ծառայության վճարը:

Կախված հանգամանքներից: Ապահովագրական շատ ընկերություններ հատուցում են գենետիկական խորհրդատվության համար, սակայն անհրաժեշտ է ճշտել անմիջապես Ձեր ապահովագրական ընկերությունից: Հնարավոր է՝ Ձեզ համար գործի համավճար:

Իմ ապահովագրությունը կհատուցի՞ գենետիկական հետազոտության ծախսը:

Ապահովագրությամբ հաճախ հատուցվում է գենետիկական հետազոտության ծախսը, երբ անձի բժշկական պատմությունը հուշում է՝ հնարավոր է քաղցկեղի ժառանգական ռիսկ: Ձեր գենետիկական խորհրդատուն կվերանայի Ձեր պատմությունը՝ պարզելու, թե որ գենետիկ հետազոտությունը կարող է նպատակահարմար լինել Ձեզ համար, և արդյոք հետազոտությունը կարող է հատուցվել ապահովագրությունով:

Իմ ապահովագրությունը կհատուցի՞ ինձ համար առաջարկվող հետազոտությունները կամ վիրահատությունները:

Անհրաժեշտ է ճշտել անմիջապես Ձեր ապահովագրական ընկերությունից: Առողջապահական որոշ համակարգեր կամ կլինիկաներ կճշտեն Ձեր փոխարեն:

Գենետիկական խորհրդատվության և հետազոտության վերաբերյալ տարածված համոզմունքներ

Գենետիկական խորհրդատվությունը նախատեսված է միայն քաղցկեղ ունեցող մարդկանց համար. ՍԽԱԼ

Գենետիկական խորհրդատուները հանդիպում են և՛ քաղցկեղ ունեցող, և՛ չունեցող անձանց հետ: Գենետիկական խորհրդատուն կօգնի Ձեզ պարզել, թե արդյոք Ձեզ մոտ առկա է քաղցկեղի ավելի բարձր հավանականություն՝ էլնելով կապված քաղցկեղի ընտանեկան պատմությունից:



Պարտադիր չէ անցնել գենետիկական հետազոտություն, եթե հանդիպում եք գենետիկական խորհրդատուի հետ. ՃԻՇՏ

Ձեր որոշումն է անցնել կամ չանցնել գենետիկական հետազոտություն:

Կան գենետիկական հետազոտության համար վճարման տարբերակներ. ՃԻՇՏ

Ապահովագրական շատ ընկերություններ հատուցում են գենետիկական հետազոտության ծախսը: Որոշ լաբորատորիաներ առաջարկում են ինքնուրույն վճարման տարբերակներ և/կամ ֆինանսական աջակցության ծրագրեր, եթե չունեք ապահովագրություն, ունեք ապահովագրության ցածր գումարի հատուցում կամ չեք կարող Ձեզ թույլ տալ անցնել գենետիկական հետազոտություն:



Գենետիկական խորհրդատվությունը հասանելի է միայն այն դեպքում, եթե ապրում եք մեծ քաղաքում. ՍԽԱԼ

Միջիգանի մի շարք առողջապահական կենտրոններում կան գենետիկական խորհրդատուներ: Որոշ կլինիկաներ կարող են առաջարկել տեսազանգի կամ հեռախոսազանգի միջոցով այցելություններ, ուստի, ստիպված չեք լինի ճանապարհ անցնել խնամք ստանալու համար:

Քաղցկեղի բարձր ռիսկի տակ գտնվող յուրաքանչյուր ոք, անկախ սեռից, կարող է օգտվել գենետիկական խորհրդատվությունից և/կամ հետազոտությունից. ՃԻՇՏ

Կան ժառանգական քաղցկեղների մի շարք տարբեր տեսակներ, որոնք կարող են վնասել բոլոր սեռերի, ռասաների և ազգային պատկանելությունների անձանց:





Կրճքագեղձի քաղցկեղի ռիսկը կարող է փոխանցվել միայն անձի մոր միջոցով. ՍԽԱԼ

Կրճքագեղձի քաղցկեղի ռիսկը կարող է փոխանցվել ծնողներից որևէ մեկից: Սա ճիշտ է քաղցկեղի այլ տեսակների դեպքում, որոնք առավել վնասում են միայն մեկ սեռին, ինչպես օրինակ՝ շագանակագեղձի և ձվարանների քաղցկեղն է:

Եթե Ձեզ մոտ առկա է քաղցկեղի ժառանգական ռիսկ, Ձեզ մոտ կարող է առաջանալ քաղցկեղ. ՍԽԱԼ

Քաղցկեղի ժառանգական ռիսկ ունեցող ոչ բոլոր անձանց մոտ կարող է առաջանալ քաղցկեղ:

Կան սկրինինգի և բուժման տարբերակներ, եթե Ձեզ մոտ առկա է քաղցկեղի ավելի բարձր ռիսկ. ՃԻՇՏ

Ձեր բժիշկը կարող է առաջարկել քաղցկեղի ռիսկը նվազեցնելու կամ քաղցկեղը վաղ փուլում հայտնաբերելու տարբերակներ, ինչը կարող է հեշտացնել բուժման ընթացքը:

Կան բժշկական ապահովագրության հատուցման մերժումից Ձեզ պաշտպանող օրենքներ, եթե Ձեզ մոտ առկա է քաղցկեղի ժառանգական ռիսկ. ՃԻՇՏ

Գոյություն ունի դաշնային օրենք, որը պաշտպանում է անհատներին առողջության ապահովագրության և աշխատանքի խտրականությունից՝ հիմնվելով նրանց գենետիկ տվյալների վրա: ԱՄՆ նահանգների հիմնական մասում կան նաև պաշտպանություն առաջարկող օրենքներ:



Ունե՞ք այլ հարցեր կամ մտահոգություններ: Եթե այո, կարող եք այցելել migr.org/providers/michigan-cancer-genetics-alliance

Կամ զանգահարել MDHHS (Michigan Department of Health and Human Services) ժառանգական քաղցկեղի հարցերով թեժ գծին՝ 866-852-1247